




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«04» ապրիլ 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

 Մ. Անանյան

ԳԲԽ-39/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Էն Գրուպ» ՍՊԸ-ի 18.04.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Էն Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Էն Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 18.04.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը 16.02.2016թ. մասնակցել է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-16/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում

կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և 3-7-րդ, 10-13-րդ, 16-րդ, 17-րդ, 28-րդ, 47-րդ, 50-53-րդ, 150-րդ, 191-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Պատվիրատուի կողմից ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով ենթակետով նախատեսված տվյալների ճշտման վերաբերյալ կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությամբ «Էն Գրուպ» ՍՊԸ-ի Ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք տարիների շրջանառության վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել, ինչը հիմք է հանդիսացել Պատվիրատուի կողմից «Էն Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու համար:

«Էն Գրուպ» ՍՊԸ-ն բողոքով հայտնել է նաև, որ Ընկերությունը ստեղծվել է 28.07.2015թ.: Ընկերության 2015թ. համախառն եկամուտը կազմել է 6 625 467 ՀՀ դրամ, իսկ շահութահարկի գծով 2015թ. հաշվետվությունը հարկային տեսչություն ներկայացվել է 07.04.2016թ., որի մեջ երևում է համախառն եկամուտը:

Ըստ Ընկերության՝ քանի որ Ընթացակարգը տեղի է ունեցել 16.02.2016թ. և Պատվիրատուի կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն հարցումը կատարվել է մինչև շահութահարկի հաշվետվությունը ներկայացնելը, այդ իսկ պատճառով «Էն Գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք տարիների շրջանառության վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի տրամադրվել, սակայն Ընկերությունը փաստացի ունեցել է համախառն եկամուտ, որը երևում է Ընկերության 2015թ. ԱԱՀ-ի հաշվետվություններում:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է մասնակիորեն դադարեցնել Պատվիրատուի կողմից 12.04.2016թ. կայացված պայմանագիր կնքելու որոշումը՝ 3-7-րդ, 10-13-րդ, 16-րդ, 17-րդ, 28-րդ, 47-րդ, 50-53-րդ, 150-րդ, 191-րդ չափաբաժինների մասով և որոշել «Էն Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու իրավացիությունը:

Ընկերության ներկայացուցիչները, մասնակցելով 22.04.2016թ. ժամը 14:20-ին Կենտրոնում կայացած ԳԲԽ-39/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել են բողոքը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը 20.04.2016թ. թիվ 02/61-7259 գրությամբ ներկայացրել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ Օրենքով սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված Ընթացակարգի թվով 19 չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Էն Գրուպ» ՍՊԸ-ն:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Էն Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների ընթացքում համախառն եկամուտ չունի:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ Պատվիրատուն խնդրել է Ընկերության նկատմամբ նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ վերջինիս գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Երևանի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով 22.04.2016թ. ժամը 14:20-ին Կենտրոնում կայացած ԳԲԽ-39/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-39/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-39/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. «Էն Գրուպ» ՍՊԸ-ն Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով **14.03.2016թ.** հայտ է ներկայացրել:

3. Ընկերությունը հայտի N 3.4 հավելվածով հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

4. Ընկերությունը հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ՝ թվով 77 չափաբաժինների համար:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Էն Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի թվով 19-ը չափաբաժինների մասով:

6. Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 31.03.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Էն Գրուպ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

7. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.04.2016թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ **«Էն Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն (04.03.2016թ.) նախորդող երեք հաշվետու տարիների (2013թ., 2014թ., 2015թ.) համախառն եկամուտ չի ունեցել:**

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.04.2016թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ «Էն Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

9. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.04.2016թ. կայացրել է պայմանագիր կնքելու մասին որոշում, որի մասին հայտարարությունը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է 13.04.2016թ.՝ սահմանելով անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

10. Համաձայն Ընկերության կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 18.04.2016թ. ներկայացված բողոքին կից փաստաթղթերի՝ Ընկերության կողմից հարկային մարմնին շահութահարկի գծով հաշվարկը սահմանված կարգով ներկայացվել է **07.04.2016թ.-ին:**

11. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 20.04.2016թ. թիվ 01/04.1/1594-16 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին, խնդրելով հայտնել, թե ինչքան են կազմում «Էն Գրուպ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելուն (2016թ.) նախորդող (2013թ., 2014թ., 2015թ.) երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը:

12. Ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 02.05.2016թ. թիվ 1/6-1/13795-16 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում 28.04.2016թ. դրությամբ **«Էն Գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 6,625,488 ՀՀ դրամ:**

4. ԳԲԽ-39/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Էն Գրուպ» ՍՊԸ-ի 18.04.2016թ. ներկայացրած բողոքը, Երևանի քաղաքապետարանի 20.04.2016թ. թիվ 02/61-7259 գրությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 02.05.2016թ. թիվ 1/6-1/13795-16 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ շահութահարկ վճարողներն իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին յուրաքանչյուր տարվա արդյունքներով՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը, ներկայացնում են սահմանված կարգով հարկային մարմնի կողմից հաստատված շահութահարկի հաշվարկ:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

«Էն Գրուպ» ՍՊԸ-ն Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-16/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակցության 14.03.2016թ. հայտի N 3.4 հավելվածով հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամրի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 31.03.2016թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Էն Գրուպ» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Էն Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտ չունի:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտ չի ունեցել, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.04.2016թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ «Էն Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Ընկերությունը 18.04.2016թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ «Էն Գրուպ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների, մասնավորապես 2015թ. համախառն եկամտի հանրագումարը կազմել է **6 625 467** ՀՀ դրամ, ինչը հաստատվում է կցված հաշվետվություններով:

Ընկերությունը 18.04.2016թ. ներկայացրած բողոքին կից ներկայացրել է 2015թ. ժամանակաշրջանի համար շահութահարկի գծով հաշվետվությունը ՀՀ ֆինանսների նախարարություն **07.04.2016թ.** մուտք անելու վերաբերյալ ծանուցումը, համաձայն որի՝ Ընկերության կողմից շահութահարկի գծով հաշվետվությունը հարկային մարմնին ներկայացվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով սահմանված ժամկետում:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 20.04.2016թ. թիվ 01/04.1/1594-16 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին, խնդրելով հայտնել, թե ինչքան են կազմում «Էն Գրուպ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելուն (2016թ.) նախորդող (2013թ., 2014թ., 2015թ.) երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 02.05.2016թ. թիվ 1/6-1/13795-16 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում 28.04.2016թ. դրությամբ «**Էն Գրուպ**» ՍՊԸ-

ի հայտը ներկայացնելուն (2016թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 6,625,488 ՀՀ դրամ:

Այսպիսով, հաշվի առնելով, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.04.2016թ. թիվ 4 արձանագրությամբ Ընկերության հայտը մերժվել է՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.04.2016թ. եզրակացությունը, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտ չի ունեցել, ինչը սակայն չի համապատասխանում իրականությանը, գտնում ենք, որ «Էն Գրուպ» ՍՊԸ-ի 18.04.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքը հիմնավոր է, ուստի առաջարկում ենք Ընկերության բողոքը բավարարել և դադարեցնել Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-16/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2016թ. պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ 3-7-րդ, 10-13-րդ, 16-րդ, 17-րդ, 28-րդ, 47-րդ, 50-53-րդ, 150-րդ, 191-րդ չափաբաժինների մասով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների բողոքարկման և
ահագանգման բաժնի վարիչ՝



Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահագանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-39/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Ծատուրյան